

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՊԱՏՎՈԳՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սույն թվականի **սեպտեմբերի 29-ին, հինգշաբթի օրը,** Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ մեծահարգ Բաբկեն Սարկիսովը նախագահական պալատում ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և հանդիսավոր իրադրության մեջ հանձնում է նրան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգիրը խաղաղության պաշտպանության օգտին նրա հայրենասիրական գործունեության համար և ծննդյան 75-ամյակի կապակցությամբ:

Ընդունելով Հայկական ՍՍՀ պետական պարգևը՝ Ամենայն Հայոց Հայրապետը հանդես է գալիս մեծարգո նախագահին ուղղված հետևյալ շնորհակալական և երախտագիտական խոսքով.

«Այս հանդիսավոր պահին ես ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել հայրենի կառավարությանը այն բարձր պարգևի համար, որին արժանացրեց ինձ:

Տիար նախագահ, ես համարվում եմ Հայաստանյայց Եկեղեցու պետը և իմ այդ պատասխանատու պաշտոնում ես աշխատում եմ, որ լուսավոր և շեն լինի Հայաստանյայց Եկեղեցին:

Տակավին այն ժամանակներից, երբ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ էի, ինձ բախտ էր վիճակվել մի քանի անգամ լինել Հայաստանում: Պատերազմը նոր էր վերջացել, և մեր երկիրը վերականգնվում ու բուժում էր իր վերքերը: Այն ժամանակ ես չէի մտածում, որ կլինեմ Հայաստանյայց Եկեղեցու առաջնորդը: Բայց, երբ երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի մահվանից հետո ինձ ընտրեցին Ամենայն Հայոց կաթողիկոս, իմ մեջ նոր ուժ ու կորով պարթևեց ամբողջ հոգով և սրտով նվիրվելու մայր Եկեղեցուն, նվիրվելու մայր հայրենիքին և համայն հայ ժողովրդին: Իմ առաջադրած նպատակների իրագործումը հեշտ չէր, դժվարին աշխատանքներ էին սպասում ինձ առջևում: Գիտենք, որ դժվարին գործերի կատարումը գրեթե անիրագործելի է, երբ մարդ լինում է միայնակ: Եվ ահա այդ նվիրական գործունեության մեջ իր բաժինն ունեցավ մեր հայրենի կառավարությունը, որը սատար հանդիսացավ մեր բոլոր ձեռնարկներին;

Մեր Եկեղեցին կոչ ազգային Եկեղեցի է, ազգային է, որովհետև իր գործունեությամբ ծառայում է իր ժողովրդին և հայրենիքին: Սակայն միաժամանակ մեր Եկեղեցին ծառայում է նաև համայն մարդկության բարօրությանը և աշխարհում խաղաղության հաստատմանը:

Մեր Եկեղեցին, որ աշխարհի հնագույն Եկեղեցիներից է, ունեցել է նույն ճակատագիրը, ինչ որ իր սիրեցյալ ժողովուրդը, հանդիպել է բազմաթիվ արհավիրքների, պատերազմների և կոտորածների, որոնց պատճառով էլ մեր Եկեղեցին և ժողովուրդը ցրվել են աշխարհի չորս ծագերում: Բայց այդ բոլոր փոթորկալից արհավիրքները թոյլնելով ետևում, հայ ժողովուրդը նորից հարություն է առել և նորից շենացրել մայր հայրենիքը և իր մայր Եկեղեցին: Թեև Մեր սիրեցյալ զավակների մի մասը այսօր հեռու է ապրում մայր երկրից, բայց նրանք խոր զգացումներով և նվիրումով կապված են մնում հայրենիքին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Եվ պատահական չէ, որ Մեր պանդուխտ որդիները, երբ այցելում են Հայաստան՝ իրենց նախնիների երկիրը, անձամբ զգում և ապրում են հայ իրականությունը և այդ բոլորով տրամադրված, գոհունակ սրտով վերադառնում են իրենց բնակատեղիները՝ հաստատապես համոզված լինելով, որ հայը ապրում է, կա և կլինի:

Ներկայումս մեր Եկեղեցու կարևոր խնդիրներից մեկն է պահպանել Սփյուռքը, վերծ պահել նրան ձուլման վտանգից, էլ ավելի սերտացնել մայր Հայաստանի և Սփյուռքի կապերը:

Այս նվիրական պահին ես ցանկանում եմ ասել հայրենի կառավարությանը, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ունի մի մեծ և սրբազան առաքելություն՝ պայքարել աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար:

Տիար նախագահ, այս պատվոգիրը, որ Մեզ հանձնեցիք այսօր, էլ ավելի է Մեզ պարտավորեցնում և ուժ տալիս ծառայելու ի շահ մայր հայրենիքի և համայն հայ ժողովրդի:

Թող Աստված հաստատ և անսասան պահի մայր հայրենիքը:

Թող Աստված իր խաղաղության ոգին պարգևի աշխարհի բոլոր ժողովուրդներին»:

Այնուհետև Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բաբկեն Սարկիսովը դիմում է Հայոց Հայրապետին հետևյալ շնորհավորական խոսքով:

«Այս պարգևատրումը նշանակում է, որ մեր պետությունը բարձր է գնահատում Ձեր հայրենասիրական, խաղաղասիրական գործունեությունը: Մեր ժողովուրդը, որ ունեցել է պատմական դառը ճակատագիր, շատ լավ գիտե իր նոր պետականության արժեքը, մի պետականություն, որ գոյության կոչվեց շնորհիվ սովետական կարգերի: Ուստի և մեր ժողովուրդը պաշտպանում է Սովետական Միության արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը: Խաղաղությունը անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին և նաև՝ շատ ցավ ու տառապանք տեսած մեր ժողովրդին: Խաղաղության արևի տակ աճեց ու բարգավաճեց մեր Հանրապետությունը, հզորացավ մեր ժողովուրդը թվով և հոգով: Ուստի և պատահական չէ, որ մեր պետությունը պարգևատրում է Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ նրա հայրենասիրական, խաղաղասիրական գործունեության համար:

Ձեր 75-ամյակը մեր պետությունը պատվում է իր պատվոգրով և կիսում Ձեր ուրախությունը: Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության բարձրագույն իշխանության կողմից ի սրտե շնորհավորում ենք Ձեր

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ծայրագույն պատրիարք, Ամենայն հայոց կաթողիկոս
Վազգեն Առաջին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐ 1983 Թ. սեպտեմբերի 19-Ի ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ

Խաղաղության պաշտպանության օգտին հայրենասիրական գործունեության համար և ծննդյան յոթանասունհինգամյակի կապակցությամբ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ Է ՁԵԶ

ՊԱՏՎՈԳՐՈՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Բ. Սարգսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

85 թ. 19.IX.

75-ամյակը և մաղթում Ձեզ քաջառողջություն, երջանկություն և նոր եռանդ Ձեր հայրենանվեր, խաղաղասիրական գործունեության մեջ»:

Պատվոգրի հանձնման հանդիսավոր արարողությանը ներկա էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հ. Բաղդասարյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար Մ. Բախչինյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

Ներկա էին նաև հոբելյանական հանդիսությունների առթիվ Ս. Էջմիածին ժամանած Հայ Եկեղեցու արտասահմանյան և ներքին թեմերի թեմակալ առաջնորդներն ու այլ բարձրաստիճան հոգևորականներ: